«ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ANQA-2025/126

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 ապրիլի 2025 թ.N 126

«ԿՈՏԱՅՔԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ-Ի ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ընդհանուր տեղեկություն հաստատության մասին

Հաստատության լրիվ անվանումը՝ **«Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջ» ՊՈԱԿ**

Գործունեության հասցեն՝ ՀՀ, Կոտայքի մարզ, ք.Հրազդան, Կենտրոն թաղամաս 96

Նախորդ հավատարմագրման մասին որոշումը և ժամկետը՝ պայմանական ինստիտուցիոնալ հավատարմագրում 2 /երկու/ տարի ժամկետով,

02 հունիսի 2021 թ. N 51

«Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի Հավատարմագրման հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով), ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 978–Ն որոշմամբ հաստատված «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգով (այսուհետ՝ Հավատարմագրման կարգ), «ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին» 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ, «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի (այսուհետ՝ ՈԱԱԿ) հավատարմագրման հանձնաժողովի ձևավորման և գործունեության ընթացակարգով և «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգով, 2025 թվականի ապրիլի 18-ին Հավատարմագրման Հանձնաժողովի նիստում քննարկեց «Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ քոլեջ, ՄՈՒՀ) ինստիտուցիոնալ կարողությունների հավատարմագրման հարցը:

Հավատարմագրման գործընթացի հիմնական փուլերն իրականացվել են հետևյալ ժամկետներում.

դիմում-հայտի ներկայացում՝ 01 փետրվարի 2024թ.

ինքնավերլուծության ներկայացում՝ 10 հունիսի 2024թ.

փորձագիտական այցի իրականացում՝ 16-18-ը դեկտեմբերի 2024թ.

փորձագիտական զեկույցի ներկայացում՝ 21 փետրվարի 2025 թ.

թերությունների վերացման նախնական ծրագրի ներկայացում՝ 13 մարտի 2025թ.

ՄՈՒՀ-ի ինստիտուցիոնալ կարողությունների փորձաքննությունն իրականացվել է հետևյալ փորձագիտական խմբի կողմից.

- **Հերմինե Գրիգորյան՝** ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու, Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարանի Բնական գիտությունների ֆակուլտետի դեկան, «Մաթեմատիկայի և ինֆորմատիկայի» ամբիոնի դոցենտ, փորձագիտական խմբի ղեկավար:
- **Գոհար Մկրտչյան՝** բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ, Հայկական բժշկական ինստիտուտի Կրթության որակի ապահովման կենտրոնի ղեկավար, փորձագիտական խմբի անդամ:
- **Աիդա Դաբաղյան՝** Ֆրանս-հայկական մասնագիտական ուսումնական կենտրոնի կրթության որակի ապահովման պատասխանատու, փորձագիտական խմբի անդամ:
- **Արեգ Խալափյան՝** Երևանի հենակետային բժշկական քոլեջի ուսանող, փորձագիտական խմբի անդամ՝ ուսանող-փորձագետ:

Փորձաքննությունն իրականացվել է ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ հաստատված ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով: Գնահատման արդյունքներն են.

Չափանիշ	Եզրակացություն
1. Առաքելություն և նպատակներ	Բավարարում է
2. Կառավարում ու վարչարարություն	Բավարարում է
3. Մասնագիտության կրթական ծրագրեր	Բավարարում է
4. Ուսանողներ	Բավարարում է
5. Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմ	Բավարարում է
6. Հետազոտություն և զարգացում	Բավարարում է
7. Ենթակառուցվածք և ռեսուրսներ	Բավարարում է
8. Հասարակական պատասխանատվություն	Բավարարում է
9. Արտաքին կապեր և միջազգայնացում	Չի բավարարում
10. Որակի ներքին ապահովման համակարգ	Բավարարում է

Հանձնաժողովը, ուսումնասիրելով ՄՈՒՀ-ի կողմից ներկայացված ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծությունը, զեկույցի նախնական տարբերակի վերաբերյալ քոլեջի դիտարկումները, փորձագիտական զեկույցը, զեկույցում նշված թերությունների վերացման գործողությունների նախնական ծրագիրը, լսելով քոլեջի փորձագիտական գնահատման վերաբերյալ Հանձնաժողովի նախագահի կողմից ընտրված երկու անդամների եզրակացությունները, որոնք ձևավորվել են փորձագիտական խմբի անդամների և ուսումնական հաստատության ներկայացուցիչների հետ հանդիպումների արդյունքում, ինչպես նաև Հանձնաժողովի անդամների դիտարկումներն ու առաջարկությունները, ամրագրեց հետևյալը.

1. ***ՄՈՒՀ-ն ապահովում է որակավորումների արժանահավատ շնորհում:***

Քոլեջում իրականացվող կրթական ծրագրերը համապատասխանում են ոլորտի պահանջներին և ձևավորված են աշխատաշուկայի կարիքների հիման վրա: Վերջին տարիներին բարելավվել են ուսուցման մեթոդները, ներդրվել են ուսանողակենտրոն մոտեցումներ և գործնական բաղադրիչներ, այդ թվում՝ դուալ կրթության տարրեր, որոնք նպաստում են ուսանողների պրակտիկ հմտությունների

ձևավորմանը: Դասախոսական կազմը կայուն և փորձառու է, ընդգրկում է նաև գործատուների ներկայացուցիչներ, և դիտվում է երիտասարդացման դրական միտում: Ուսումնական գործընթացում ակտիվորեն կիրառվում են գործընկեր կազմակերպությունների ռեսուրսները: Ապագայում նպատակահարմար է շարունակել դասախոսների կարողությունների զարգացումը և ուսանողների գնահատման համակարգի հետևողական կատարելագործումը, ինչպես նաև դուալ կրթության տարրերի ներդրումը մասնագիտական կրթական բոլոր ծրագրերում՝ կրթության որակի շարունակական բարձրացման նպատակով:

2. **Կառավարման և որակի ապահովման համակարգերն ապահովում են կայունություն և զարգացում:**

Քոլեջում ռազմավարական կառավարումն իրականացվում է հաստատված առաքելության և ռազմավարական ծրագրի շրջանակում: Նախորդ հավատարմագրումից հետո զգալիորեն բարելավվել են պլանավորումը, տվյալահենք որոշումների կայացումը և կառավարման կառուցվածքը: Որակի ապահովման համակարգը դարձել է կայուն. ներդրվել են գնահատման և վերլուծության մեխանիզմներ, համակարգի գործառույթները համակարգում է լրիվ դրույքով ՈԱԿ պատասխանատուն:

Առաջիկայում նպատակահարմար է շարունակել կառավարման գործիքների ինստիտուցիոնալ ամրապնդումը՝ բոլոր ստորաբաժանումներում ներդնելով գնահատման առանցքային ցուցանիշների համակարգ: Բացի այդ, անհրաժեշտ է զարգացնել Կառավարման խորհրդի մասնակցային ներուժը՝ ապահովելով խորհրդի ավելի ակտիվ ներգրավվածությունը ռազմավարական որոշումների կայացման գործընթացում:

3. **Միջազգայնացումն ու հետազոտական/ստեղծագործական գործունեությունը զարգացման միտումներ ունեն և աջակցում են որակավորումների արժանահավատ շնորհմանը:**

Քոլեջում արձանագրվել է դրական առաջընթաց հետազոտական բաղադրիչի զարգացման ուղղությամբ: Սահմանվել են հետազոտական ուղղություններ, ներդրվել է ուսանողների ինքնուրույն աշխատանքների իրականացման ընթացակարգ, կիրառվում են խրախուսման մեխանիզմներ: Առկա են ուսանողների և դասախոսների կողմից իրականացվող կիրառական և վերլուծական աշխատանքների օրինակներ, հատկապես՝ մասնագիտական ուղղություններով:

Արտաքին կապերի մասով հաստատությունն ունի արդյունավետ համագործակցություն տեղական գործընկերների հետ, մասնավորապես՝ պրակտիկաների կազմակերպման շրջանակում, ինչը նպաստում է ուսանողների գործնական հմտությունների ձևավորմանը:

Միջազգայնացման ուղղությամբ քոլեջի ռազմավարական ծրագրում նախատեսված են զարգացման նպատակադրումներ, սակայն դրանց իրագործումը դեռևս պահանջում է համակարգված մոտեցում: Անհրաժեշտ է ձևավորել միջազգայնացման կառավարման հստակ կառուցվածք՝ այդ թվում՝ առանձնացնելով պատասխանատու աշխատակցի հաստիք: Զարգացման կարևոր ուղղություններից է նաև դասախոսների և ուսանողների՝ օտար լեզվի կարողությունների բարելավումը՝ միջազգային ծրագրերին մասնակցության հնարավորությունների ընդլայնման նպատակով:

4. Թերությունների վերացման ծրագրում անհրաժեշտ է նախատեսել վերը նշված բացերի լուծմանն ուղղված առաջնահերթ գործողություններ՝ ապահովելով նաև հնարավոր ռիսկերի կանխարգելման և կառավարման համապատասխան միջոցառումներ:

Ելնելով վերը նշվածից՝ Հավատարմագրման հանձնաժողովը բաց քվեարկության արդյունքում

ՈՐՈՇԵՑ

1. **«Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջ» ՊՈԱԿ-ին շնորհել ինստիտուցիոնալ հավատարմագրում՝ 6 /վեց/ տարի ժամկետով:**

2. Հավատարմագրում շնորհելու որոշման հրապարակումից հետո՝ երկամսյա ժամկետում ՈԱԱԿ-ին ներկայացնել ՄՈՒՀ-ի Կառավարման խորհրդի կողմից հաստատված փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման վերանայված ծրագիր և համապատասխան ժամանակացույց:
3. Հատուկ ուշադրություն դարձնել կրթական ծրագրերում որակավորումների արժանահավատ շնորհման ապահովման արդյունավետությունը՝ կազմակերպելով բոլոր կրթական ծրագրերի ներքին աուդիտ մինչև հաջորդ հավատարմագրման ժամկետը:
4. Հավատարմագրման կարգի 12.1 կետի պահանջներին համապատասխան 2 տարի մեկ անգամ ՈԱԱԿ-ին գրավոր զեկույց ներկայացնել իրականացված գործողությունների արդյունքների վերաբերյալ՝ գնահատելով հաստատության գործունեության բարելավումը, նորարարություններն ու ձեռքբերումները: Գնահատման արդյունքները քննարկել քոլեջի կառավարման խորհրդում:
5. Հանձնարարել ՈԱԱԿ-ին պարտադիր մշտադիտարկման ենթարկել ՄՈՒՀ-ի գործունեության արդյունավետությունը՝ ըստ առաջընթացի առանցքային ցուցիչների:

Հավատարմագրման հանձնաժողովի նախագահ **Վ. Գաբրիելյան**

2025 թ., ապրիլի 18